Գործ թիվ ԵԴ2/4607/02/25
ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը(այսուհետ՝ դատարան),նախագահությամբ Դատավոր՝ Աննա Շիլաջյանի

2025 թվականի հունիսի 16-ին քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), գրավոր ընթացակարգով, քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՝Դոռզնակ՞ ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 00853017) ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի (ՀՎՀՀ՝ 04440435)՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ ՝ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14՞ ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 16.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ամրագրված «Դոռզնակ» ՍՊ ընկերության մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու, 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետում նշված որոշումը «Դոռզնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետում նշված «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊ ընկերության և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու որոշումներն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

՝Դոռզնակ՞ ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ ՝ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14՞ ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 16.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ամրագրված «Դոռզնակ» ՍՊ ընկերության մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու, 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետում նշված

որոշումը «Դոռգնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետում նշված «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊ ընկերության և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու որոշումներն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Ծիլաջյանին է մակագրվել 30.04.2025 թվականին:

Դատարանի 06.05.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 16.06.2025 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը չի քննարկվել:

2. Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորի ներկայացուցիչը դիմելով Դատարան, հայցադիմումով մասնավորապես հայտնել է.

«(...) Պահանջը հիմնավորվում է նրանով, որ թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում՝ իբրև պարտադիր պահանջ նշված է եղել այն հանգամանքը, որ մասնակիցն ունենա Ծինարարության իրականացում լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական, արտադրական: Այս պահանջը նշված է եղել նաև շինարարական աշխատանքների իրականացման համար պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող աշխատանքների կատարման նախագծում: Նշված հանգամանքը նկատի ունենալով էլ հայցվորը մասնակցել է մրցույթին և ներկայացրել հրավերի տեքստով և նախագծով պահանջվող լիցենզիան և մնացած բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Բայց մեզ անհասկանալի պատճառներով պատվիրատուն՝ առանց հրավերի տեքստում փոփոխություն կատարելու, մասնակիցներից պահանջել է ներկայացնել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով: Այլ կերպ՝ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում հստակ սահմանվել էր «բնակելի հասարակական արտադրական» լիցենզիայի առկայության պահանջ, ինչն էլ հիմք է հանդիսացել մեր կողմից մրցույթին մասնակցելու և գնային առաջարկ ձևավորելու համար: Այլ լիցենզիայի պահանջ ներկայացված լինելու պարագայում մենք կարող էինք կամ ընդհանրապես չմասնակցել, կամ մասնակցել՝ ներկայացնելով այլ գնային առաջարկ: Նմանապես, հնարավոր է, որ այս հանգամանքը որոշիչ դեր է ունեցել այլ պոտենցիալ մասնակիցների համար՝ իրենց մասնակցության վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պատվիրատուին հայտնել ենք, որ այս նոր պահանջը (քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիայի առկայություն տրանսպորտային ուղիներ ներդիրով) շեղվում է սկզբնական սահմանված պայմաններից և կարող է լրջորեն խախտել գնումների գործընթացի արդարությունն ու թափանցիկությունը՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի պահանջներին և սկզբունքներին: Նաև մատնանշել ենք, որ Պատվիրատուի

կողմից նոր՝ հրավերով չնախատեսված լիցենզիա պահանջելու հիմքում դրված ֆինանսների նախարարության պարզաբանումը վերաբերում է այն դեպքին, երբ ընդհանրապես լիցենզիայի առկայությունը հրավերով սահմանված չէ: Մեր դեպքում, հակառակը, լիցենզիայի տեսակը հստակ և կոնկրետ սահմանվել է հրավերով:

Նշվածը հաշվի առնելով՝ խնդրել ենք պատասխանողից հիմնավորել, թե ինչ իրավական հիմքով և հիմնավորմամբ է փոփոխվում նախապես հաստատված մասնակցության պայմանը, և որ օրենսդրական դրույթի համաձայն է նման փոփոխությունը թույլատրելի, որպեսզի կարողանանք ավելի լիարժեք և հիմնավոր արձագանքել ստեղծված իրավիճակին: Սակայն բարձրացված խնդրին ի պատասխան հայցվոր ընկերության հայտը գնահատվել է անբավարար և հաղթող է ճանաչվել հայցվոր ընկերությունից ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած կազմակերպություն:

Գտնում ենք, որ հայցվոր ընկերության հայտը գնահատվել է անբավարար առանց որևէ հիմնավոր պատճառի, որպես այդպիսին նաև բովանդակային հիմնավորում չի ներկայացվել որոշման մեջ: Ամբողջ վերոգրյալը հայտն անբավարար գնահատելու հիմնավորման վերաբերյալ հանդիսանում է ենթադրություն:

(...)

https://gnumner.minfin.am/hy/search/ կայքում 2025թ. մարտի 21-ին հրապարակվել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով N ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱԾՁԲ-25/14 ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր (այսուհետ՝ Հրավեր):

Հրավերի հավելված 7-ի 8.16 կետով սահմանվում է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Հրավերի գնման առարկայի բնութագրի սահմանման մեջ 1.1 կետում նշված է, որ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը- նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են Ճինարարության իրականացում լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական արտադրական:

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը սահմանող աշխատանքային նախագծով իբրև լիցենզիայի տեսակ նշված է՝ Ճինարարության իրականացում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական, արտադրական:

Գնահատող հանձնաժողովի 2025թ. ապրիլի 16-ի N 3 Արձանագրության առաջին կետով ամրագրվել է, որ բոլոր մասնակիցներին ուղարկվում են ծանուցումներ ներկայացնելու քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով: Գնահատող հանձնաժողովը 2025թ. ապրիլի 18-ի N 4 Արձանագրությամբ՝- «ԴՈՌԶՆԱԿ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, իսկ «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊԸ-ի «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կոնսորցիումը՝ իբրև նվազագույն գնային առաջարկ ներկայացրած, ճանաչվել է ընտրված մասնակից:

https://gnumner.minfin.am/hy/search/ կայքում 2025թ. ապրիլի 23-ին

հրապարակվել է թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն: (...)

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 13-րդ հոդվածներով, 4- րդ բաժնի առաջին գլխով, 34-րդ, 46-րդ հոդվածներով և դրանց հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող այլ իրավական նորմերով, խնդրել է՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացում ոչ իրավաչափ ճանաչել գնահատող հանձնաժողովի՝ 2025թ. ապրիլի 16-ի N 3 արձանագրության 1-ին կետով ամրագրված «Դոռգնակ» ՍՊԸ-ի մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու որոշումը:

Ոչ իրավաչափ ճանաչել 2025թ. ապրիլի 18-ի հայտերի գնահատման նիստի N 4 արձանագրության 2-րդ կետում նշված որոշումը «Դոռգնակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու մասով որոշումը:

Ոչ իրավաչափ ճանաչել 2025թ. ապրիլի 18-ի հայտերի գնահատման նիստի N 4 արձանագրության 3-րդ կետում նշված «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊԸ-ի և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու որոշումը: (...) :

3.Պատասխանողի դիրքորոշումը.

Պատասխանողի ներկայացուցիչը 12.05.2025 թվականին հայցադիմումի պատասխան է ներկայացրել Դատարան, որով մասնավորապես հայտնել է. (...) Հայցվորի կողմից վկայակոչվել է այն հանգամանքը, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի կողմից անցկացվող թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի հրավերում սահմանված է եղել «բնակելի հասարակական արտադրական» լիցենզիայի առկայության պահանջ, իսկ հետո պահանջվել է ներկայացնել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա՝ տրանսպորտային ուղիներ ներդիրով:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ չկա օրենսդրական որևէ կարգավորում, որ գնման գործընթացի հրավերում պարտադիր պետք է նշվի լիցենզիայի տեսակը: Թիվ ԱՄԱՀ-հյԱ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման հրավերում, հրավերին կից նախագծում և դրան հաջորդող մյուս ընթացակարգերում պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնման գործընթացին փոխկապակցված այլ իրավական ակտերի պահանջները: Մրցույթի մասնակիցը պարտավոր էր տեղյակ լինել, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա՝ տրանսպորտային ուղիներ ներդիրով, սակայն «Դոռգնակ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիա՝ «Տրանսպորտային ուղիներ» և «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» ներդիրներով:

Արաքս համայնքապետարանի կողմից անցկացվող թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ- 25/14 ծածկագրով գնման մրցույթի հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի N 2 արձանագրության որոշման 2-րդ կետի համաձայն՝ Արաքսի

համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանի, հարցումներ է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն (01.04.2025թ. N 861 գրություն) և ՀՀ քաղաքաշինության կոմիտե (01. 04.2025թ. N 856 գրություն) մրցույթի հրապարակված նախագծով շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճանին համապատասխան պահանջվող լիցենզիայի դասի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի ապրիլի 7-ի N 01/22/5493-2025 և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 2025 թվականի ապրիլի 15-ի N 03/26/8040-2025 գրությունները հիմք են հանդիսացել «Դոռգնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու համար: (...):

Ելնելով վերոգրյալից խնդրել է հայցվորի պահանջն ամբողջությամբ մերժել:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4.1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի 1.1 կետի համաձայն՝ ի թիվս այլնի նշվել է, որ նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են Շինարարության իրականացում լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական .արտադրական:

4.2. Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 19.03.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքսերը:

4.3. Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 28.03.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 2 նիստի արձանագրության համաձայն՝ գնահատող հանաձնաժողովն արձանագրել է, որ հրավերով սահմանված ժամկետում հայտ և գնային առաջարկ են ներկայացրել հինգ մասնակից:

Արձանագրել է նաև, որ Դոռգնակ ՍՊ ընկերությունը ներկայացրել է շինարարության իրականացման լիցենզիան՝ 3-րդ դասի, բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ ներդիրով /ՔՊL-002586/, որը չի համապատասխանում հրապարակված նախագծի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովն որոշել է հայտերի բացման նիստը կասեցնել և ծանուցել մասնակից Դոռգնակ ՍՊ ընկերությանը՝ ներկայացնելու հրապարակված նախագծով պահանջվող շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճանին համապատասխան 1-ին կամ 2-րդ դասի լիցենզիա, բնակելի հասարակական և արտադրական կառույցներ լիցենզիայի ներդիրով:

4.4. Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 01.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 2 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանաձնաժողովն որոշել է ընտրված մասնակից ճանաչել Դոռգնակ ՍՊ ընկերությանը՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Նույն նիստի 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն որոշել է գրություններ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով մրցույթի հրապարակված նախագծով շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճանին համապատասխան պահանջվող լիցենզիայի դասի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

4.5. Դոռոզնակ ՍՊ ընկերությունը թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությանը կից ներկայացրել է **3-րդ դասի** թիվ ՔՊL-002586 լիցենզիան՝ շինարարության իրականացում գործունեության համար, հետևյալ լիցենզիայի ներդիրներով՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ, տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) գործունեության համար:

4.6. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից ՀՀ ֆինանսների նախարարին 01.04.2025 թվականին հասցեագրված թիվ 861 գրության համաձայն՝ հայտնվել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերը, նախագծի հետ միասին հրապարակվել է gnumner.am կայքում: Նախագծով, ճարտ. առաջադրանքով նախատեսվել է շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճան: Գնման ընթացակարգի ընտրված մասնակիցը ներկայացրել է շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիա, բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ ներդիրով /ՔՊL-002586/:

Խնդրում ենք ձեզ պարզաբանել, արդյոք շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիա ունեցող մասնակիցը կարող է կատարել 3-րդ ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանք, եթե «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվել է, որ «3-րդ դասի գործունեության տեսակը բնորոշվում է 1-ին և 2-րդ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ»:

ԵՎ արդյոք լիցենզիայի համապատասխան դաս չունենալը հիմք է մասնակցի հայտը մերժելու համար:

4.7. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարին 15.04.2025 թվականին հասցեագրված թիվ 03/26/8040-2025 գրության համաձայն՝ հայտնվել է, որ բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ներկայացված է www.procurement.am կայքում գործող տեղեկագրում՝ «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնի «Պատվիրատուների կողմից տրված հարցեր» ենթաբաժնի 14-րդ կետում:

Ինչ վերաբերվում է շինարարական աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաների տեսակներին, ապա նշվածի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել քաղաքաշինության ոլորտը կարգավորող լիազոր մարմնին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին:

4.8. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին 01.04.2025 թվականին հասցեագրված թիվ 856 գրության համաձայն՝ հայտնվել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերը,

նախագծի հետ միասին հրապարակվել է gnumner.am կայքում: Նախագծով, ճարտ. առաջադրանքով նախատեսվել է շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճան: Գնման ընթացակարգի ընտրված մասնակիցը ներկայացրել է շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիա, բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ ներդիրով /ՔՊL-002586/:

Խնդրում ենք ձեզ պարզաբանել, արդյոք շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիա ունեցող մասնակիցը կարող է կատարել 3-րդ ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանք, եթե «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվել է, որ «3-րդ դասի գործունեության տեսակը բնորոշվում է 1-ին և 2-րդ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ»:

ԵՎ արդյոք նախագծային փաստաթղթերում նախագծման թույլտվությունում (ճարտ. առաջադրանք) ռիսկայնության աստիճանը նշելը, վերաբերվում է միայն նախագծողին, ոչ շինարարություն իրականացնողին:

4.9. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարին 07.04.2025 թվականին հասցեագրված գրության համաձայն՝ հայտնվել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱԾՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով:

Միաժամանակ հայտվել է, որ նախագծման թույլտվությունում (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ներկայացված ռիսկայնության աստիճանը վերաբերվում է և նախագիծ իրականացնող և հետագայում շինարարություն իրականացնող կազմակերպություններին:

4.10. Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱԾՁԲ-25/14» ծածկագրով 16.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 նիստի արձանագրության համաձայն՝ ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրության՝ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱԾՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով»:

ՀՀ ֆինանսաների նախարարության՝ դիրքորոշումը ներկայացված է www.procurement.am կայքում գործող տեղեկագրում «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ բաժնի «Պատվիրատուների կողմից տրված հարցեր» ենթաբաժնի 34-րդ կետում:

Գնահատող հանձնաժողովն որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, բոլոր մասնակիցներին ուղարկել ծանուցումներ ներկայացնելու քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով:

4.11. Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱԾՁԲ-25/14» ծածկագրով 18.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 4 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, մասնակիցների ներկայացրած լիցենզիաները, գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական

ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի «1» չափաբաժնի համար ՎԱԼ-ԱՐՏ ՍՊ ընկերության, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումի ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, մասնակիցների ներկայացրած լիցենզիաները, գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի 1 չափաբաժնի համար «Դոռգնակ» ՍՊԸ-ի, ՕՄԵԳԱ ՇԻՆ ՍՊԸ-ի, «ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ-ի «ՖՈՒԼԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կոնսորցիումի, «ԲԵՍՏ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի ՖԱՍԹ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ-ի կոնսորցիումի ներկայացրած հայտերը գնահատել անբավարար:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի «1» չափաբաժնի համար ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝ «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊԸ-ի ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կոնսորցիումին ճանաչել որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից:

4.12. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ «ՀԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանը հայտարարել է «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊ ընկերության և ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

5. Դատարանի պատճառաբանությունները և իրավական վերլուծությունները

Դատարանը, գործով ներկայացված ապացույցների ամբողջական և բազմակողմանի հետազոտության արդյունքում, յուրաքանչյոր ապացույց հետազոտելով մյուս ապացույցների հետ համադրված, ներքին համոզմամբ, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 234.5-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության)

կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) պատվիրատու՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ,

(...)

3) գնում՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը.

(...)

5) մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ.

6) ընտրված մասնակից՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.

7) հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ.

8) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

(...)

13) լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի

Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին.

(...)

17) գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ.

(...)

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը. (...):

Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝

1) էլեկտրոնային աճուրդը.

2) մրցույթը.

3) գնանշման հարցումը.

4) մեկ անձից գնումը:

Նույն Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:

Կարգի 4-րդ կետի գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Վճռաբեկ դատարանը, 25.06.2024 թվականի թիվ ԵԴ/29192/02/21 քաղաքացիական գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *(...) Վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ գնման*

գործընթացը գնում կատարելու նպատակով գնման գործընթացին մասնակցող անձանց կողմից իրականացվող գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Գնման գործընթացի վերջնանպատակը գնում կատարելու համար գործարք կնքելն է: Ընդ որում, պայմանագիրը կնքվում է այն մասնակցի հետ, ում հայտը, այսինքն՝ առաջարկը, համապատասխանում է պատվիրատուի իրավերին, այսինքն՝ առաջարկվող պայմաններին: Առաջարկվող պայմաններն ի թիվ այլնի վերաբերում են նաև գնվող ապրանքին (գնման առարկա), ինչպես նաև դրա հատկանիշներին (գնման առարկայի բնութագիր), որը ներառում է նաև ապրանքի տեխնիկական տվյալները (ստանդարտ): Հետևաբար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Արդյունքում՝ մասնակցի հայտը պետք է համապատասխանի իրավերով սահմանված պահանջներին: Հայտի՝ իրավերով սահմանված պայմաններին համապատասխանության հարցը քննարկում և գնահատում է գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում:

Գործադիրը, սահմանելով գնումների գործընթացի կազմակերպման կարգը, դրա շրջանակներում կարգավորել է նաև գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման գործընթացը: Մասնավորապես, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում է մասնակցի հայտի անհամապատասխանություն իրավերի պահանջներին, ապա գնահատող հանձնաժողովին վերապահված է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ մասնակցին ծանուցելու հնարավորություն (բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է հայտի ապահովումը կամ եթե այն ներկայացված է իրավերի պահանջներին անհամապատասխան):

Այլ կերպ ասած՝ գնահատման հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են իրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ գնային առաջարկից և (կամ) հայտի ապահովումից բացի այլ անհամապատասխանությունների արձանագրման դեպքում մասնակիցներին տրվում են դրանք շտկելու հնարավորություն և ժամկետ: Միաժամանակ սահմանված ժամկետում խախտումը չշտկելու կամ թերի շտկելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: (...):

Վճռաբեկ դատարանը, 04.05.2025 թվականի թիվ ԵԴ/54386/02/21 քաղաքացիական գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գնումը հանրային կարիքների համար անհրաժեշտ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար կատարվող որոշակի գործողությունների համախումբ է, որոնց արդյունքում կնքվում է գնման պայմանագիրը, և բավարարվում է պատվիրատուի կարիքը:*

Գնման գործընթացն իրականացվում է միմյանց տրամաբանորեն հաջորդող որոշակի փուլերով:

Գնման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հաջորդաբար տեղի ունեցող առնվազն երկու փուլերի՝

1) կոնտրագենտի ընտրության (նախապայմանագրային) փուլ, որը հետապնդում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախանշված սկզբունքների պահպանմամբ լավագույն (տնտեսող, արդյունավետ և օգտավետ) առաջարկի ընտրության և նրա հետ պայմանագրի կնքման

նպատակ.

2) ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագրի կատարման (պայմանագրային) փուլ, որի նպատակը նախորդ փուլում ընտրված մասնակցից նրա կողմից առաջարկված և հավանության արժանացած առաջարկի պայմաններով ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերման ապահովումն ու պատվիրատուի կարիքի բավարարումն է:

Գնման գործընթացի փուլերից յուրաքանչյուրի ընթացքում գնման գործընթացը նախաձեռնող պատվիրատուի և գնման գործընթացի մասնակիցների միջև ծագում են տարաբնույթ պարտավորական հարաբերություններ, որոնց իրավական կարգավորման հիմքում օրենսդիրը դրել է գնման գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման վերջնանպատակն ու գնման գործընթացը միասնական կանոններով իրականացնելու, այն մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու, մասնակիցների շրջանակի ընդլայնման, նրանց միջև մրցակցության խրախուսման, ցանկացած անձի համար գնման գործընթացին մասնակցելու հնարավորության ապահովման սկզբունքները: Ընդ որում, նախապայմանագրային փուլում որպես գնման գործընթացի սուբյեկտների քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ծագման հիմք հանդես են գալիս «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված միակողմանի գործողությունները (գնումների հայտարարության և հրավերի հրապարակումը, հայտի ներկայացումը, ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելը և այլն), իսկ պայմանագրային փուլում՝ պատվիրատուի ու սահմանված կարգով ընտրված մասնակցի միջև կնքված պայմանագիրը: (...)

Վերը շարադրված իրավական նորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրապարակված հրավերի հիման վրա գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելով՝ անձը ոչ միայն պարզապես ձեռք է բերում գնման գործընթացին մասնակցող անձի կարգավիճակ, այլ նաև, որպես հետևանք՝ գնումների գործընթացի նախապայմանագրային փուլում առնվազն ստանձնում է՝

1) հայտն օրենքով և հրավերով սահմանված կարգով ներկայացնելու պարտավորություն՝ ներառյալ հայտին հրավերով պահանջվող փաստաթղթերը (այդ թվում՝ հայտի ապահովումը հավաստող) կցելու, գնման գործընթացում գնահատող հանձնաժողովին պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու պարտականություն,

2) հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին արժանահավատ հավաստում ներկայացնելու պարտականություն,

3) ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում որակավորման ապահովում ներկայացնելու, պայմանագրի ապահովում ներկայացնելու, պայմանագիրը կնքելու պարտականություն: (...) :

Տվյալ դեպքում Դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալ փաստերը.

● ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի 1.1 կետի համաձայն՝ ի թիվս այլնի նշվել է, որ նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են **Ճինարարության իրականացում՝ լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական**

.արտադրական:

● Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 19.03.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովը որոշել է հաստատել** ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի **հայտարարության և հրավերի տեքսերը:**

● Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 01.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 2 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանաձնաժողովն որոշել է ընտրված մասնակից ճանաչել Դոռոզնակ ՍՊ ընկերությանը՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Նույն նիստի 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանաձնաժողովն որոշել է գրություններ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով մրցույթի հրապարված նախագծով շինարարության իրականացման 3-րդ ռիսկայնության աստիճանին համապատասխան պահանջվող լիցենզիայի դասի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

● Դոռոզնակ ՍՊ ընկերությունը թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությանը կից ներկայացրել է 3-րդ դասի թիվ ՔՊԼ-002586 լիցենզիան՝ շինարարության իրականացում գործունեության համար, հետևյալ լիցենզիայի ներդիրներով՝ բնակելի, հասարարկական և արտադրական կառույցներ, տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայանը, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) գործունեության համար:

● ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարին 07.04.2025 թվականին հասցեագրված գրության համաձայն՝ հայտնվել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման **2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով**:

Միաժամանակ հայտնվել է, որ նախագծման թույլտվությունում (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ներկայացված ռիսկայնության աստիճանը վերաբերվում է և նախագիծ իրականացնող և հետագայում շինարարություն իրականացնող կազմակերպություններին:

● Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԴՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 16.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 նիստի արձանագրության համաձայն՝ ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրության՝ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով»:

Գնահատող հանձնաժողովն որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, բոլոր մասնակիցներին ուղարկել ծանուցումներ ներկայացնելու քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով:

● Թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով 18.04.2025 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 4 նիստի արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, մասնակիցների ներկայացրած լիցենզիաները, գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով [ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14] ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի «1» չափաբաժնի համար [ՎԱԼ-ԱՐՏ] ՍՊ ընկերության, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումի ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պարզաբանումները, մասնակիցների ներկայացրած լիցենզիաները, գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով [ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14] ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի [1] չափաբաժնի համար «Դոռգնակ» ՍՊԸ-ի, [ՕՄԵԳԱ ԾԻՆ] ՍՊԸ-ի, «ԾԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ-ի «ՖՈՒԼԼ-ԾԻՆ» ՍՊԸ-ի կոնսորցիումի, «ԲԵՍՏ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի [ՖԱՍԹ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ-ի կոնսորցիումի ներկայացրած հայտերը գնահատել անբավարար:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով [ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14] ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի «1» չափաբաժնի համար ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝ «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊԸ-ի [ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կոնսորցիումին ճանաչել որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից:

Վերոշարադրյալ իրավական նորմերի, դրանց իրավադրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ արտահայտած Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների և սույն գործով փաստերի համադրմամբ կատարված վերլուծության արդյունքում Դատարանը նախ հարկ է համարում նշել, որ գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման փուլում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հարցում կատարելու և հարցման պատասխանը ստանալու արդյունքում է բացահայտել, որ թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա՝ տրանսպորտային ուղիներ ներդիրով, ինչից հետո էլ մասնակիցներից պահանջել է ներկայացնել 2-րդ դասի լիցենզիան՝ համապատասխան ներդիրով, մինչդեռ [Դոռգնակ] ՍՊ ընկերությունը մրցույթին մասնակցել է հիմնվելով հրավերով պահանջվող չափանիշների վրա:

Հայցվորը ներկայացնելով իր մասնակցության հայտը ոչ միայն ձեռք է բերել գնման գործընթացին մասնակցող անձի կարգավիճակ, այլ նաև ստանձնել է հայտը և դրան կից փաստաթղթերն օրենքով և *հրավերով* սահմանված կարգով ներկայացնելու պարտավորություն: Հետևաբար Դատարանը եզրակացնում է, որ հայցվորի համար բացասական հետևանքներ կարող էին առաջանալ կամ վերջինս կարող էր պատասխանատվություն կրել միայն **հրավերով սահմանված,** սակայն իր կողմից չներկայացրած կամ թերի ներկայացրած հայտի և կից փաստաթղթերի համար:

Ելնելով վերոգրյալից Դատարանը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների համար լրացուցիչ պահանջներ

սահմանելը, մասնավորապես՝ «տրանսպորտային ուղիներ» ներդիրով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 2-րդ դասի լիցենզիա պահանջելը, այն չներկայացնելու հիմքով հայցվորի հայտն անբավարար գնահատելը և այլ մասնակցի ընտրված մասնակից ճանաչելն ըստ էության խախտել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված մրցակցության, թափանցիկության և համաչափության սկզբունքները, հետևաբար հայցվորի կողմից վիճարկվող պատասխանողի գործողություններն ոչ իրավաչափ են:

Ինչ վերաբերում է պատասխանող կողմի այն պնդումներին, որ չկա օրենսդրական որևէ կարգավորում, որ գնման գործընթացի հրավերում պարտադիր պետք է նշվի լիցենզիայի տեսակը կամ մրցույթի մասնակիցը պարտավոր էր տեղյակ լինել հրավերով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար «տրանսպորտային ուղիներ» ներդիրով լիցենզիայի անհրաժեշտության մասին, ապա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ **հրավերում** և պայմանագրում **հիմնական պայմանների ներառման**, ինչպես նաև Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման **պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:**

Վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն հրավերով սահմանված պահանջները պետք է ձևակերպի հնարավորինս հստակ, բացառելով սահմանված պահանջների կամ չափանիշների վերաբերյալ տարընթերցումները:

Նման պայմաններում, Դատարանը գտնում է, որ պետք է անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ «ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14» ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 16.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 1-ին կետով, 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով և 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված՝ «Դոռգնակ» ՍՊ ընկերության մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու, «Դոռգնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու, «Վալ-Արտ» ՍՊ ընկերության և «Արտ Պլաս» ՍՊ ընկերության կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

6. Դատական ծախսեր.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանը նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանից հօգուտ Դոռոզնակ ՍՊ ընկերության պետք է բռնագանձել բավարարված հայցապահանջին համամասնորեն պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Դոռոզնակ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 16.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ամրագրված «Դոռոզնակ» ՍՊ ընկերության մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու, 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետում նշված որոշումը «Դոռոզնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետում նշված «ՎԱԼ-ԱՐՏ» ՍՊ ընկերության և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու որոշումներն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի թիվ ԱՄԱՀ-ԽՄ-ԳՀԱՇՁԲ-25/14 ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի հետևյալ որոշումները.

● 16.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված «Դոռոզնակ» ՍՊ ընկերության մասով քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման երկրորդ դասի լիցենզիա տրանսպորտային ուղիներ ներդիրով ներկայացնելու մասին որոշումը,

● 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված «Դոռոզնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու մասին որոշումը,

● 18.04.2025 թվականի հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացված «Վալ-Արտ» ՍՊ ընկերության և «Արտ Պլաս» ՍՊ ընկերության կոնսորցիումին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանից հօգուտ Դոռոզնակ ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 52089108772
Date: 2025.06.16 12:22:40 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am